

մենաօլսերիմ թշնամին անդամ՝ հաղիւ կարողանայ առանց զզուանքի կարդալ այն անպատկառ գրութիւնը, որ «Փըտութեան օճախ» է կոչւում։ Եւ յիրաւի սա մի գրքոյէ է, որ միայն անպատութիւն կարող է բերել մամուլին և գրականութեան։ Առաջին երեսից մինչև վերջինը անամօթ գրչակի խծրծանք է և հայհոյանքի կոյտ Ա. Օրմանեանցի դէմ, և զուր կորոնէք փաստեր իւր հայհոյանքների մողայիկների մէջ արծարծած զբարտութիւնները հաստատող։ Ավանս մամուլի ազատսւթիւն, որ սրիկայական հակում ունեցող անխիղն մարդկանց միջոց է տալիս իրենց մտքի և հոգու ապականութիւնները ուրիշին հրամցնելու։ Մենք խնայում ենք ընթերցողների ճաշակն ու զգացումը նմուշներ բերելու այդ պասկվիլային աղտօտութիւնից։ Բովանդակութեան կեզտը զարդարուած է և ծաղրանկարներով։ Զգուանք և նողկանք կարող ենք միայն արտայայտել մամուլի և գրականութեան այսպիսի երեւոյթների դէմ։

Գ.

Ճանապարհորդական տպաւորութիւնը և համառօտնկարագիր դէպքերի վերջին կաթուղիկոսական ընտրութեան ժամանակ. գրեց Սուբիս եպիսկոպոս Պարգեանց 1985 թուականին. Երևան, 1907. 145 երես. գինն է 60 կոպէկ։

Դերապատիւ Տ. Սուբիս արքեպիսկոպոսը մեր միաբանութեան նշանաւոր անդամներից մէկն է, որ էական դեր է կատարել անցեալ գալու եօթանասնական թուականների ոկրզբեց մինչև այժմ։ Նորա ուսուցչական գործունէութիւնը, ընդհարումը հանգուցեալ Գէորգ Գ. կաթուղիկոսի հետ, գպրոցական խնդրել առթիւ նրա աւղեկորութիւնը Ս. Պետերբուրգ, խաղացած դերը 1884 և 1885 թ. թ. կատարուած կաթուղիկոսական ընտրութիւնների ժամանակ, աքսորները գէպի Ռուսաստան հանգուցեալ Երեմիա Եպիսկոպոսի տեղապահութեան և ապա Եկեղեցական կալուածների գրաւման ժամանակ, Երկարաւատե հովուութիւնը երբեք Ալեքսանդրապոլի և ն. Նախիջեանի վոխանութ և Աստրախանի ու Երևանի առաջնորդ գլխաւոր

Հանդոյցներն են նորա պատմական նշանակութիւն ունեցող գործունէութեան։ Խըր ժամանակին, բնական էր, Սրբազնի ընթացքն ու գործունէութիւն, ենթարկուել է այլ և մեկ նութիւնների և առարկութեանց, ունեցել է իւս պաշտպանական ներն ու հակակրազները։

Այժմ իւս վերջին տարիների առանձնութեան մէջ մի գեղեցիկ միտք է յզացել, մասումք ևս արտաքին յարձակումներից և պատճառներից գրգռուած, կարգաւորել իւր կեանքի և գործունէութեան հետ կապ ունեցող էակոն դէպրերի յիշողութիւններն ու պաշտօնական փաստաթղթերը և հրատարակութեան տալ, լուսուանելով անցեալ իրողութիւնները, որոնք սխալ բացատրութիւնների և հասկացաղութեան առիթ են տուել։ Արգէն ապօւած են նորա «Պատուիրակութիւն» ի Ս. Պետերուրգ Հայոց գլուխների մասին» նախ »Արարատի» մէջ 1907 Գ. Հ. Համար և ապա առանձին գրքով։ Հրատարակուած է նաև նորա «Նամակ Ս., Էջմիածնի Սինօդի ատենապետի տեղակալ Գեր. Երեմիա Կպիսկոպոս Քալուտեանի անուան» 1907, Երևան և վերջապէս ներկայ գրախօսութեան նիւթ կազմող գրքոյնք, Գրքիս շապկի վերայ ապօւած յայտարարութիւնից երեսում է, որ մի քանի նման շետառա Շիններ ևս շուտով լոյս կտեսնեն։

Այս աշխատաւթեան մի մասը ապօւած է 1885 թ. «Մեղու Հայաստանի» լրագրի չք 43, 44, 45, 46 և 47 համարներում, այժմ կցուած են Երկու յաւելուած, որոնք կապ ունին խնդրի լուսաբանութեան հետ և կարեոր փաստաթղթեր են։ Սրբազնն հեղենակը նախ պարզում է, որ ինքը անձնականապէս դէմ չէ եղել ներսէս պատրիարքի ընտրութեան, բայց սխալ է համարել նորա կողմնակիցների ձգառումը անպատճառ նորան ընտրել, եթէ երկիցս և երիցս հերաժարուել է այդ բարձր պատուից հիւանդութեան պատճառով։ Առ դէմ չէ եղել և Մելքիսեդէկի արքակիոկառուի ընտրութեան, այլ Սեղբակեանի և Ս. Աթոռի ութեշ միաբանների հետ ցանկալի թեկնածու է համարել Մակարի հետ և նորան։ Նորութիւն է ընթերցողի համար, որ Սեղբակեան Գէորգ Գ. կաթուղիկոսի մահուանից յետոյ Սուքիս եպիսկոպոսին ուղղուծ նամակով արժանաւորագոյն ընտրելի է համացում Մակար արքեպիսկոպոսին, այն ինչ ընտրութիւնների ժամանակ ըոլորովին այլ դերք էր բռնել։ Հետաքրքրական են 1885 թ. մայիսի 21-ին կատարուած ընտրութեան մանրամասնութիւնները, յատկապէս աշխարհիկ և հոգեօր պատգամաւորների հակադիր հայեացքն ու ընթացքը, առաջինները Արգար Յովհաննիուեանի և Երկրորդները Սուքիս

եպիսկոպոսի ղեկավարութեամբ; Հեղինակը ջրում է և այն ամբաստանութիւնը, որ տպուեցաւ Ալրեելք»-ի և ուրիշ թերթերի մէջ, որպէս թէ Սուբհաս եպիսկոպոսը մի քանի կուսակից միաքանների հետ Տակարի ընտրութիւնը հասաւաել առաջ նպատակով գիմել է ներքին գործոց նախարարին և կոսկոծելի որոյ տուել Մելքիոնգեկի անձնաւորութիւնը: Անձնական բացարութիւններից և հայեացքներից զատ, որ անք նշանակութիւն ունին իրեկ ժամանակակից անձնաւորութեան վկայութիւն, գրքի արժեքը բարձրանում է՝ որպէս պատմութեան ազբեր՝ մէջ բերուած պաշտօնական թղթերով և նամակներով:

4.

## ՄՈՒՐԱՅԱՆ

(† ԳՐԻԳՈՐ Տ. ՅՈՎՀՈՅՆԻ ՍԵԱՆ)

Հայ, առանց այն էլ վերջերս ազօտացած զեղարուեատական գրականութեան մշակների շղթայի օղակներից մէկն էլ քակուեց . . .

Սնցեալ օգոստոս ամսի 30-ին Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում, ծանր հոգեկան հիւանդութիւնից յետոյ մեռաւ հայ տաղանդաւոր վիպագիր Մուրացանը (Գրիգոր Տէր Յովհաննիսեան):

Մեր գրականութեան մէջ Մուրացանը, գրաւում է պատուաւոր տեղ իւր զեզուն ու ճոխ լեզուով, վիպասանական շնորհալի գրչով. նա և թատերագիր էր. նորա Ռուզան-ը շատ երկար հայ բեմի ինքնուրոյն ու էպերաւուարի դարսն էր կազմում և կազմում է այժմ, իրեկ պատմական—ազգային պիէսների մէջ լաւագոյնը:

Մուրացանը գրչի համեստ մշակներից էր և ու էկլամաներից խուսափող, գուցէ մասամբ հէնց այդ պատճառով էլ հասարակական ասպարէզում մնում էր վարագոյրի ետեւ:

Նա գրական ասպարէզ ելաւ ու թաւնական թուականների սկզբներին, իւր գրչի արգիւնքները ամփոփելով